

գեղեցիկներէն է, բայց ոչ Վոլփրամ եւ ոչ ալ իր գաղղիացի նախորդը գիտցած չեն առթէն օգտուիլ Պարկիվալլ ծաւալով քառասպատիկ մեծ է քան Վիրգիլիոսի Ենեալանքը։ ԺՔ դարու հեղինակները, ինչպէս նաեւ այդ դարուն ասպետները կարծես իրենց գործոց երկարութեան մէջ կը զբոսնէին իրենց հաճոյքը։ Վոլփրամի՝ ինչպէս իր ժամանակակիցներուն ոճը՝ շատ թերի է։ Գոտփրետ Սորապուրգցին, իր ժամանակին գիտնական Հասարակութեան թարգմանն է. ակնարկելով Պարկիվալլի հեղինակին՝ կը խօսի «բանաստեղծական դաշտին գաղտնարաններուն վրայ՝ որ կը ջրլացնեն տկար մտքերը խաբեպատիբ գեղեցկութիւններով եւ փոխան մարգարիտներու՝ փոշի կուտան»։

Թրգմ. Հ. Ս. ՏԻՐ-ՄՈՎԱԼԵՆԻՆ

ՀԱՅ ՀԱՆՁԱՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

— — — — —

Բժշկապետ Էրուսնդ Արալսն Բրօքէսօրի նոր յաղթանակը.

Հայութիւնը անգամ մը եւ կը պանծայ յաշ օտարներու իր տաղանդաւոր որդիներէն մէկուն նոր յաղթանակովը։

La Provincia di Padova լրագրի հոկտեմբեր 28-29 թիւէն կը տեղեկանք հետեւեալը.

«Բիթի, կոկորդի եւ լսիլիքի վերաբերող հիւանդութիւններու իտալական համաժողով մը գումարուեցաւ ի Թորինոյ հոկտեմբեր 25ին»։

Ջանազան մեծանուն բժիշկներու կարգին մէջ բազմած էր նաեւ Բրօք. Արալսն, վաղեմի աշակերտը Մ. — Ռափայէլեան վարժարանին։ Ինչը հաղորդեց ժողովականաց իւր գտած վիրաբուժական եւ անդամահատական նոր կերպը՝ հազարի հնացած անձկութիւնը (stenosi croniche della laringe) քարմանկոյ համար։

Այս իւր հանճարեղ տեղեկատուութիւնը սաստկադորդ ծափահարութեամբ եւ մեծամեծ գովութիւններով ընդունուեցաւ բովանդակ ժողովականներու կողմանէ։

Բրօք. Արալսն իր երկար տարիներու աշխատութեանը եւ փորձառութիւններուն արդիւնքը՝ անհակառակելի կերպով ապացուցական դարձնելու համար, ներկայացուցած էր նաեւ (ժողովականներու զննութեան), այն իւր դարմանած հիւանդները որոնք անրուծելի կարծուած յիշեալ ախտէն վարակուած էին, եւ այժմ կատարելապէս բժշկուած։

Յետ երկար բանավիճութեան՝ որուն մասնակցեցան իտալացի նշանաւոր մասնագէտ բժիշկները՝ ինչպէս եւ Բրօք. Մագլինի՝ երեսփոխան Ճենովայի, Կրատէնիկոյ՝ Թորինոյ համալսարանին մէջ ուսուցիչ, Ֆէրէրէրի՝ Հոովմէն, Նիցօլայի եւ Փանիարոյ՝ Միլան քաղաքէն, եւ այլն, եւ այլն, հոշակեցին միակ, հանճարեղ, բանաւոր, գործադրելի եւ նախընտրելի եղանակ մը Բրօք. Արալսնի առաջարկածը՝ հազարի հնացած անձկութիւնը բժշկելու համար։

Մեծանուն հայ Ուսուցչապետին յիշեալ բանախօսութիւնը եւ հաղորդակցութիւնները, բոլոր աշխարհիս նշանաւոր կոկորդի բժիշկները զբաղեցնող ծանր հիւանդութեան մը վերաբերելով, յիրաւի յիշեալ ժողովին մէջ վիճուած նիւթերէն ամենակարեւորը եւ պատուարները հոշակուեցաւ։

Մինչեւ ցարդ իտալիոյ եւ Արտասահմանի մէջ փորձուած եւ գործադրուած մեթոտները գերազանցող հայուն այս գիւտը անտարակոյս ընդունելի պիտի ըլլայ ամէն տեղ եւ Մարդկութիւնը անգամ մ'ալ օգուտ քաղած պիտի ըլլայ Հայ Հանճարէն։

Ջերմաշերմ եւ սրտագին՝ եւ մեր շնորհաւորութիւնները հայութեան պատուարի մեր համակրելի բարեկամ՝ Բժշկապետին։

Հ. Ն. ՏԻՐԱՅՈՒՆԵԱՆ

